

ու հայու շատ արժանաւորութիւններէ դուրս՝ ցեղով, կրօնով, բարքերով ու սովորութիւններով տարբեր՝ Քիւրդ է :

Իսկ քիւրդը աշխարհ կը սիրէ հայուն, որ նա չի կրնար ապրիլ առանց անոր. իրեն անհրաժեշտ է անոր շնորհը, անոր զարգացումն ու մարդավայել վարքն ու բարքը : Եւ անպատճառ կուզէ զայն ունենալ :

Իսկ երբ կերթայ բերելու, և կը տեսնէ որ ոչ մի միջոց չօգնէր այդ յաջողցնելու, ոչ սովորութիւնը, ոչ համոզմունքը, ոչ կաշառը, ոչ յաղթութիւնը, կը դիմէ զայրոյթի սարսափահար միջոցներուն, նա կը կատարէ երբ Հայ ազգի իւր հայ կիներ չի գնահատեր իր գեղեցկութիւնը, իր քաջութիւնն ու ազատութիւնը : Նա հաշուի չը դնելով կրօնը, ազգային տարբերութիւնը, բարքերու հեռաւորութիւնը, իրեն համեմատութեան կը դնէ իր կարծիքով «Քրլայ»ի հետ՝ որ օրն ի բուն անասուններու հետ դաշտը բանկով՝ երեկոները անասուններու ընկերակցութեամբ կա կը դառնայ ու ակտուր կը պառկի. և իր թափած քրտինքներով ձեռք բերած վաստակը՝ իր թուութեամբ քանի մը ժամու ընթացքին կուտայ քիւրդին ու ինքը կուլայ երախայի մը պէս, կամ կ'երթայ Թիւրքին դիմելու, որ զօրք բերէ քիւրդին հարուածէ :

Քիւրդը իր հաշիւներու մէջ կ'իսամիջոց չը ճանաչելով, իր բարքերու մէջ խղճելու ու գթելու իրեն անյայտ առաքինութեանը ծանօթ չէ. հայ կնոջը այդ վիճակի մեջ տեսած ժամանակ՝ կամ կը թափէ անոր վրայ իր բուռն կիրքերու անարդ ուժը, կամ անոր գլուխը քարերուն զայնելով փշուր փշուր կ'ընէ, ու կամ իր նիզակով ու սրով անոր փորը ճեղքելով, այդ «Քրլայ» սերունդը կը հանէ իր ոտքի տակ կը ձգէ ու կը ճմուէ, ու ինքն իրեն կ'ըսէ. «Ի՛նչ գնա՛ սովոր/ի, թող անասուն, «Քրլան» քիւրդ քաջ տղամարդէն վեր դասելը :»

Այս երկու իրարու կողմէ չը հասկցուած սկզբունքներու դարաւոր պատկերն է որ կը ներկայացնէ մեզ քրդական հարստահարութիւնը : Հայերէ աշխարհ մասը որ կը գտնուի զանազան ցեղապետութեանց մէջ, ցեղական կռիւներու ժամանակ